FACTOR TV-Ի ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV 2026

RA, Yerevan, 12 Saryan str.
E-mail: info@factor.am
Web: www.factor.am
© All Rights Reserved

ՆՊԱՏԱԿ

FACTOR TV-ի սոցիալական մեդիայի գործունեության նպատակն է հանրությանը տրամադրել ճշգրիտ, հավաստի և հանրային շահին ծառայող տեղեկատվություն՝ պահպանելով խմբագրական անկախությունը, մասնագիտական էթիկան և լսարանի վստահությունը: Սույն քաղաքականությունը կիրառվում է FACTOR TV-ի բոլոր պաշտոնական սոցիալական հարթակների նկատմամբ:

1. ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ն սոցիալական մեդիայում առաջնորդվում է ճշգրտության, անկախության, թափանցիկության և պատասխանատվության սկզբունքներով: Հրապարակումները պետք է հիմնված լինեն հնարավորինս ստուգված տեղեկատվության վրա: Փաստերը, կարծիքները և մեկնաբանությունները պետք է հստակ տարանջատվեն: Չի թույլատրվում ենթադրությունները ներկայացնել որպես հաստատված փաստ կամ օգտագործել մոլորեցնող վերնագրեր և ձևակերպումներ: Առաջինը լինելու ձգտումը չի կարող գերակայել ճշգրտությանը:
FACTOR TV-ի պաշտոնական հարթակները չեն օգտագործվում որևէ քաղաքական ուժի, թեկնածուի կամ շարժման քարոզչության համար: Գովազդային, հովանավորվող կամ գործընկերային բովանդակությունը հստակ առանձնացվում և նշվում է:
Սխալների հայտնաբերման դեպքում FACTOR TV-ն դրանք ուղղում է հնարավորինս արագ և թափանցիկ կերպով: Էական ուղղումների կամ փոփոխությունների դեպքում այդ մասին տեղեկացվում է լսարանին:

2. ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

FACTOR TV-ի սոցիալական մեդիայի բովանդակությունը պետք է լինի ճշգրիտ, համատեքստային, հարգալից և մասնագիտական: Չի թույլատրվում մանիպուլյատիվ կամ clickbait վերնագրերի օգտագործումը, հին նյութերի ներկայացումը որպես նոր, չստուգված մեղադրանքների տարածումը, ինչպես նաև ատելության խոսքը կամ խտրականությունը: Արխիվային և արհեստական բանականությամբ ստեղծված կամ էականորեն փոփոխված նյութերը պետք է հստակ նշվեն:

3. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

FACTOR TV-ն սոցիալական մեդիայում պահպանում է անվտանգ, հարգալից և կառուցողական հաղորդակցության միջավայր ձևավորելու սկզբունքը: FACTOR TV-ի YouTube հարթակում մեկնաբանությունների հնարավորությունը փակված է: Իսկ Facebook էջում իրականացվում է ակտիվ մոդերացիա:

FACTOR TV 2026

Հեռացման ենթակա են՝

- ատելության խոսքը,
- բռնության կոչերը,
- անձնական վիրավորանքները,
- սպառնալիքները,
- ապատեղեկատվությունը,
- սպամը,
- ռասիստական կամ խտրական մեկնաբանությունները,
- հայհոյախառն կամ նվաստացնող արտահայտությունները,
- կազմակերպված տրոլինգային վարքագիծը:

Մոդերացիան իրականացվում է հավասար, հետևողական և քաղաքականապես չեզոք սկզբունքներով:

4. ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

FACTOR TV-ն հարգում է իր աշխատակիցների խոսքի ազատությունը: Միաժամանակ աշխատակիցները պետք է հաշվի առնեն, որ իրենց հանրային վարքագիծը կարող է ազդել կազմակերպության հեղինակության, անկախության և վստահելիության հանրային ընկալման վրա: Աշխատակիցները պետք է հստակ տարանջատեն անձնական կարծիքը և FACTOR TV-ի խմբագրական դիրքորոշումը, չօգտագործեն FACTOR TV-ի անունը կամ հեղինակությունը անձնական, քաղաքական կամ ֆինանսական շահի համար և խուսափեն այնպիսի քաղաքական ակտիվությունից կամ հրապարակումներից, որոնք կարող են կասկածի տակ դնել իրենց մասնագիտական անաչառությունը:

5. ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արհեստական բանականության գործիքները կարող են օգտագործվել միայն խմբագրական վերահսկողությամբ: AI-ի միջոցով ստեղծված կամ էականորեն փոփոխված բովանդակությունը պետք է հստակ նշվի:

6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

FACTOR TV-ի սոցիալական էջերի անվտանգությունը առաջնահերթություն է:

Պարտադիր է՝

- երկփուլ նույնականացում (2FA),
- ուժեղ գաղտնաբառերի օգտագործում,
- նախկին աշխատակիցների հասանելիությունների անհապաղ անջատում,
- ֆիշինգի և կիբեռսպառնալիքների վերաբերյալ պարբերական իրազեկում: